ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/13/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի հունվարի 29-ին քննելով Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արմեն Աշոտի Սարգսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/13/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով, իրականացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ՀՀ

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արմեն Աշոտի Սարգսյանը հաշվետու տարում Կուսակցությանը կատարել է 2,490,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն: Կուսակցության տարեկան հաշվետվությունում առկա տվյալների արժանահավատության ստուգման նպատակով Հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով իրականացվել է հայտարարատու պաշտոնատար անձ հանդիսացող նվիրատու՝ Արմեն Աշոտի Սարգսյանի «Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) համապատասխան տվյալների ստուգում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

1) Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում որպես եկամուտ չի հայտարարագրվել 2023 թվականի օգոստոսի 3-ին «[redacted]» ՓԲԸ-ից ստացված հիփոթեքային վարկը՝ 4,123,528 ՀՀ դրամ գումարի չափով:

2) Հայտարարագրի Բ.4.1 «Հանձնված և վերադարձված փոխառություններ» ենթաբաժնում որպես փոխառություն չի հայտարարագրվել 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին [redacted] պայմանագրի շրջանակներում ք. Երևան, [redacted] հասցեում գտնվող անշարժ գույքի համար փոխանցված գումարը՝ 4,123,528 ՀՀ դրամը:

3) Հայտարարագրի Բ.4.1 «Հանձնված և վերադարձված փոխառություններ» ենթաբաժնում որպես փոխառություն չի հայտարարագրվել 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ք. Երևան, [redacted] հարկ հասցեում գտնվող ավտոկայանատեղիի (նախագծային համար 2-12) համար փոխանցված կանխավճարի գումարը՝ 804,000 ՀՀ դրամը:

4) Հայտարարագրի «Դ. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց ծախսեր» բաժնի Դ.5. «Վարկի մարմանն ուղղված վճարումներ» ենթաբաժնում որպես ծախս չի հայտարարագրվել 2023 թվականին հիփոթեքային վարկի մարմանն ուղղված գումարը՝ 4,863,112 ՀՀ դրամի:

1.2 Հանձնաժողովը 2024 թվականի նոյեմբերի 7-ին Արմեն Սարգսյանին հասցեագրել է թիվ 01/3081-2024 գրությունը՝ խնդրելով 10-օրյա ժամկետում ներկայացնել պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ:

1.3 2024 թվականի նոյեմբերի 15-ին Արմեն Սարգսյանի կողմից Հանձնաժողով են ներկայացվել վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանումներ, ինչպես նաև «[redacted]» ՓԲ և «[redacted]» ՓԲ ընկերություններում առկա՝ 2023 թվականների բանկային հաշիվների քաղվածքները:

1.4 Հանձնաժողովը, 2024 թվականի դեկտեմբերի 5-ին Արմեն Աշոտի Սարգսյանին հասցեագրել է թիվ 01/3922-2024 ծանուցումը, հրավիրելով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը՝ նշված գրությունը ստանալուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին: Նշված ծանուցումը Արմեն Սարգսյանը ստացել է 2024 թվականի դեկտեմբերի 5-ին (հիմք՝ էլեկտրոնային փոստով ստացված ծանուցման հաստատում):

1.5 2024 թվականի դեկտեմբերի 12-ին պատշաճ ծանուցված Արմեն Սարգսյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/747/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.6 Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 8-ին Արմեն Սարգսյանին հասցեագրել է թիվ 01/20-2025 գրությունը՝ հրավիրելով 2025 թվականի հունվարի 20-ին՝ ժամը 15:00-ին, վերոնշված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Նշված գրությունն Արմեն Սարգսյանը չի ստացել, ինչով պայմանավորված՝ 2025 թվականի հունվարի 20-ին Հանձնաժողովն ընդունել է թիվ

ՎԻՎ/13/2025-1 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը կասեցնելու մասին որոշում:

1.7 Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները՝ Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 21-ին իրականացրել է հրապարակային ծանուցում՝ ծանուցումը տեղադրելով Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և միաժամանակ ուղարկելով Արմեն Սարգսյանի բնակության հասցեի համայնքի ղեկավարին:

1.8 Հանձնաժողովը, միաժամանակ, նույն գրությունը 2025 թվականի հունվարի 21-ին հասցեագրել է նաև Արմեն Սարգսյանի էլեկտրոնային փոստի հասցեին՝ հրավիրելով 2025 թվականի հունվարի 29-ին՝ ժամը 15:00-ին, վերոնշված Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Նշված գրությունը Արմեն Սարգսյան ստացել է 2025 թվականի հունվարի 22-ին (հիմք՝ էլեկտրոնային փոստով ստացված ծանուցման հաստատում):

1.9 Թիվ ՎԻՎ/13/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը վերսկսվել է 2025 թվականի հունվարի 22-ին, Արմեն Սարգսյանի կողմից գործի քննության օրվա և ժամի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից էլեկտրոնային փոստին հասցեագրված ծանուցման ստացման փաստի հաստատման հիմքով:

1.10 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արմեն Աշոտի Սարգսյանի բացակայությամբ 2025 թվականի հունվարի 29-ին՝ ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Արմեն Սարգսյանի կողմից 2024 թվականի նոյեմբերի 15-ին Հանձնաժողովին է ներկայացվել գրավոր պարզաբանում, որի համաձայն՝

2.1 Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում 2023 թվականին «[redacted]» ՓԲԸ-ից 4,123,528 ՀՀ դրամի

չափով ստացված հիփոթեքային վարկի, ինչպես նաև՝ Հայտարարագրի Բ.4.1 «Հանձնված և վերադարձված փոխառությունների» ենթաբաժնում 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին [redacted] պայմանագրի համաձայն փոխանցված 4,123,528 ՀՀ դրամի վերաբերյալ տվյալները չհայտարարագրելու վերաբերյալ Արմեն Սարգսյանը հայտնել է, որ նշված տվյալների չհայտարարագրելն իր կողմից եղել է բացթողում:

Հայտարարագրի Դ.5. «Վարկի մարմանն ուղղված վճարումներ» ենթաբաժնում 2023 թվականին վճարված հիփոթեքային վարկի մարմանն ուղղված՝ 4,863,112 ՀՀ դրամ գումարը որպես ծախս չհայտարարագրելու վերաբերյալ, Արմեն Սարգսյանը նույնպես հայտնել է, որ նշված գումարը չհայտարարագրելն իր կողմից ևս եղել է բացթողում:

Հայտարարագրի Բ.4.1 «Հանձնված և վերադարձված փոխառություններ» ենթաբաժնում 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին փոխանցված 804,000 ՀՀ դրամ գումարը որպես փոխառություն չհայտարարագրելու արարքի առնչությամբ Արմեն Սարգսյանը հայտնել է, որ հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի կարգավորումները, որոնց համաձայն՝ սահմանված հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, կամ նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, հետևաբար 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին փոխանցված 804,000 ՀՀ դրամ գումարը որպես երկու միլիոնը չգերազանցող գումար չի հայտարարագրել:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/13/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ Արմեն Սարգսյանը՝

3.1 2023 թվականի դեկտեմբերի 1-ից զբաղեցնում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնը (https://www.yerevan.am/hy/districts-staff/8/):

3.2 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 «[redacted]» ՓԲ ընկերության կողմից տրված թիվ 72 բանկային հաշվի քաղվածքի համաձայն՝ 2023 թվականի օգոստոսի 3-ին ստացել է հիփոթեքային վարկ՝ 4,123,528 ՀՀ դրամ գումարի չափով, որը որպես եկամուտ չի հայտարարագրվել Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում:

3.4 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին [redacted] պայմանագրի շրջանակներում ք. Երևան, [redacted] հասցեում գտնվող անշարժ գույքի համար փոխանցել է 4,123,528 ՀՀ դրամ, որը որպես փոխառություն չի հայտարարագրվել Հայտարարագրի Բ.4.1 «Հանձնված և վերադարձված փոխառություններ» ենթաբաժնում:

3.5 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ք. Երևան, [redacted] հարկ հասցեում գտնվող ավտոկայանատեղիի (նախագծային համար 2-12) փոխանցել է 804,000 ՀՀ դրամ կանխավճար, որը որպես փոխառություն չի

հայտարարագրվել Հայտարարագրի Բ.4.1 «Հանձնված և վերադարձված փոխառություններ» ենթաբաժնում:

3.6 «[redacted] բանկ» ՓԲ և «[redacted]» ՓԲ ընկերությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի քաղվածքների համաձայն՝ 2023 թվականին կատարել է 4,863,112 ՀՀ դրամի չափով հիփոթեքային վարկերի մարմանն ուղղված ծախսեր, որոնք որպես ծախս չի հայտարարագրել Հայտարարագրի Դ.5. «Վարկի մարմանն ուղղված վճարումներ» ենթաբաժնում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են (...)Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40.1-ին հոդվածի (Ծախսերի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վարկի մարմանն ուղղված վճարումները ենթակա են հայտարարագրման: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով սահմանված հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, կամ նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ հանձնված, վերադարձված փոխառությունը.:

4.4 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն **գույքի ձեռքբերման դիմաց նախավճարի կամ կանխավճարի փաստացի վճարված գումարը հայտարարագրվում է «Հանձնած եւ վերադարձված փոխառություններ» բաժնում որպես հանձնած փոխառություն:**

4.5 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի

պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ, մասնավորապես, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Արմեն Սարգսյանի կողմից սույն որոշմամբ հաստատված փաստերի վերաբերյալ տվյալներ չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Սույն գործով Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Աշոտի Սարգսյանը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ 2024

թվականի մայիսի 10-ին ներկայացված 2023 թվականի տարեկան հայտարարագրում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, այն է.

Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում որպես եկամուտ չի հայտարարագրել 2023 թվականին «[redacted]» ՓԲԸ-ից ստացած հիփոթեքային վարկ՝ 4,123,528 ՀՀ դրամ չափով գումարը, որը Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3.1-ին կետի համաձայն պարտավոր էր հայտարարագրել որպես ստացված հիփոթեքային վարկ:

Հայտարարագրի Բ.4.1 «Հանձնված և վերադարձված փոխառություններ» ենթաբաժնում որպես տրված փոխառություն չի հայտարարագրել 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին վերոնշված անշարժ գույքերի համար որպես կանխավճար փոխանցված գումարները՝ 4,123,528 և 804,000 (ընդհանուր առմամբ՝ 4,927,528 ՀՀ դրամ) ՀՀ դրամը, որը Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պարտավոր էր հայտարարագրել:

Հանձնաժողովը, անդրադառնալով Արմեն Սարգսյանի կողմից ներկայացված պարզաբանմանը, որի համաձայն՝ 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին [redacted] պայմանագրի շրջանակներում ավտոկայանատեղիի համար երկրորդ փուլով որպես կանխավճար փոխանցված 804,000 ՀՀ դրամ գումարը չի հայտարարագրել, քանի որ նշված գումարը չի գերազանցում երկու միլիոն ՀՀ դրամը, հետևաբար որպես ծախս հայտարարագրման ենթակա գումար չի հանդիսանում, անհրաժեշտ է համարում նշել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի

անդամների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գույքի ձեռքբերման դիմաց նախավճարի կամ կանխավճարի փաստացի վճարված գումարը հայտարարագրվում է «Հանձնված եւ վերադարձված փոխառություններ» բաժնում՝ որպես հանձնված փոխառություն, այսինքն 2023 թվականին ՀՀ քաղաքաշինության կոմիտեին վճարված կանխավճարները Արմեն Սարգսյանի կողմից ենթակա են հայտարարագրման որպես փոխառություն, ինչի պայմաններում արդեն վերջինիս կողմից ներկայացված պարզաբանումն առ այն, որ նշված գումարը ենթակա չէ հայտարարագրման երկու միլիոն դրամը չգերազանցելու հանգամանքով պայմանավորված, տվյալ դեպքում վերաբերելի չէ, քանի որ որպես փոխառություն հայտարարագրման ենթակա գումարի նկատմամբ օրենքով սահմանված սահմանաչափ առկա է միայն տվյալ տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հանձնված կամ վերադարձված փոխառության գումարի դեպքում, եթե նույն անձին հանձնված կամ վերադարձված փոխառության հանրագումարը չի գերազանցում է մեկ միլիոն ՀՀ դրամը: Տվյալ դեպքում Հանձնաժողովը ևս մեկ անգամ փաստում է, որ նշված փոխառությունները գնահատվում են դրանց հանրագումարի՝ 4,927,528 ՀՀ դրամ գումարի տեսանկյունից, որն էլ իր հերթին ձևավորելու է ձեռք բերվող անշարժ գույքի արժեքը:

Հայտարարագրի Դ.5. «Վարկի մարմանն ուղղված վճարումներ» ենթաբաժնում չի հայտարարագրել 2023 թվականին կատարված հիփոթեքային վարկի մարմանն ուղղված գումարը՝ 4,863,112 ՀՀ դրամը, որը Օրենքի 40.1-ին հոդվածի 2-րդ 5-րդ կետի համաձայն պարտավոր էր հայտարարագրել որպես ծախս:

Նշված իրավախախտումներն իրենց համակցությամբ Հանձնաժողովի կողմից գնահատվում են որպես էական խախտում, որոնք վտանգում են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարակական շահը՝ ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս

ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, և միաժամանակ հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (*փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով*), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Աշոտի Սարգսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Աշոտի Սարգսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արմեն Աշոտի Սարգսյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ